

7441

ՀԱՅՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ Ն 2

ԱՎՐՈՋԵԱ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՍԿԱՌԻՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Ման

Կողմէց

ՀԱՅՆԻ ՍԿԱՌԻՏՆԵՐԻ 968

Ա. ՄԱՆՈՒՅՆ

329, 14

Մ-33

ԹԻՏԻԽ

Տպարան՝ Շիշվանութեա

1921

№ 2 «ՎԱՀԱԳՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ» № 2

«Միքայելական բարեգործություն»

370

2174-ԱՀ

Կա

ԱՆՁՐԱԺԵՂԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

329.14

Հ-33 ՍԿԱՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՈՐԴ

AD04 / 16480-5  
154888

Հ.Ս.Խ.Հ ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
\* Հ. Հ. Շ. Պ. Ա. Պ. Ո Յ Ո Ր Ո Վ Ա Բ Ո Յ Ո Տ Ո Վ Ա  
7/11. 1922  
Ա. Ա Յ Ա Խ Ա Վ Ա Ր Ա , Խ Ա Ն Ո Վ Ա  
Կ Ա Զ Ա Ր Ա , Ս Կ Ա Ո Տ Ն Ե Ր Ի Վ Ա Ր Ա  
Վ Ա Հ Ա Ր Ա , Ս Կ Ա Ո Տ Ն Ե Ր Ի Վ Ա Ր Ա

Ա. Մ Ա Տ Ա Յ Ե Ա Ն Լ ի ց

2001

Թ Ի Տ Լ Ի Ա

Ց պ ա ր ա ն « Ա շ խ ա տ ա ւ ա ր »

1991

2010

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Սկառուտական կազմակերպութիւնն առաջին անգամ հիմնելի է Անդլիայում և այստեղից կարճ ժամանակում տարածւել եւրոպայի բոլոր երկրներու

«Սկառուտ» բառը անգլիերէն է, որ նրանակում է խուզարկու, բայց դա ես չի արտայալում «սկառուտ» բառի բուն իմաստը:

Սկառուտներին խուզարկու են անւանում նրա համար, որ նրանք, որպէս ճանապարհուդող ասպեճներ, հետախուզած են կեանքի բոլոր ճանապարհները՝ օգնութեան համ ելու կարօտեալներին:

Կազմակերպութիւնն իր դաւանանքով, օրէնքներով զերծ է կուտականն կամ ծածուկ քաղաքական նպատակից. նրա հիմքը կազմում են մանկավարժական խնդիրները:

Բոլոր երկուների սկառուտները բարեկամ, եղբայր և ընկերներեն, սկառուտների հագուստի միակերպութ ուր ամեն տեղ, աման երկրում դաշնում է ազգերի ապագայ եղբայրութեան նշանաբանը: Խորհրդանշանը:

Սկառուտիզմը նոր է մուտք գործել Անգրկովաս և նրա մասին, մասնաւորապէս հայերէն լեզով, չկայ զրականութիւնն Այն ինչ, ինչպէս իրաւանութիւնն է ցոյց տալիս, օր օրի նա իր կողմն է գրաւում հայ սերունդի համակրանքն ու սէրը:

Հրատարակելով այս փոքրիկ զրքոյկը, նպատակ ենք ունեցել մի կողմից հնարա-

Հորութիւն տալ «Վահովն» սկառատներին  
կարճ ժամանակում անցնել Ալ-րդ և Ա-րդ  
կարգի քննութեան զիմաւոր կէտերը, միւս  
կողմից՝ սկառատիկմի մի քանի տարրական  
գիտելիքների հետ՝ հաղորդակից դարձնելու  
հասարակութեանը։

Ս. Մ.

### «Վահագն» սկառատական կազմակերպութեան նպատակը

Թիֆլիսի հայ սկառատական «Վահագն»  
կազմակերպութեան նպատակն է.—Փիզի-  
քապէս զարգացնել նորահաս հայ սերւնդը  
և խաղերի, զբոսանքների միջոցով, հոգե-  
բանական պահանջների համաձայն, ներդաշ-  
նակօրէն բարձրացնել նրա մատոր, բարո-  
յական կարողութիւնները, զարգացնել նրա  
մէջ սէր դէպի ինքնուրոյն աշխատանքն  
ու բնութիւնը և ուրիշն օդնելու գիտակ-  
ցութիւնը։

### Սկառատների օրէնքները

1. Կատարել իր պարտքը հայրենիքի,  
ժողովրդի և պետական իշխանութեան ա-  
ռաջ։

2. Սիրել հայրենիքը և բոլոր ուժով

ձգտել լինելու օգտակառ ու աղջիւ քաղա-  
քացի։

3. Ծառայութիւն ցոյց տալ և օգնել  
առողջին՝ նամանաւանդ ծերերի, երեսու-  
ներին և կանանց։

4. Առանց հականօտերու հնիսու կա-  
տարել իրենց ղեկավարների հրամանները։

5. Լինել կենդանիների բարեկամութեան։

6. Լինել ուրախ և երբէք չ նկանել  
հոգեպէս։

7. Լինել հաւատարիմ սկառատների  
օրէնքներին։

8. Ենթարկել պատույ դատարանին։

### Սկառատների պատուիրանները

1. Աւրիշից ոչ մի բան մի սպասիր,  
բայց դու առաք ուրիշն ամեն բան, ինչ որ  
կարող ես։

2. Ապրիր հայրենիքիդ և մարդկու-  
թեան համար ու եղիր կենդանիներին բա-  
րեկամ, պաշտպան։

3. Եղիր ասպետ և առավետական ոգով  
պաշտպանիր թշւառին, թուլերին, կուլիր  
ճշմարտութեան համար։

4. Ամրապնդիր քո մարմինն ու հո-  
գին և լուսաւորիր քո միտքը։

5. Թող քո կամքը այնպէս լինի, ինչպէս պինդ ձգտծ նեա:

6. Խորտակիր չարին և աժմնից առաջ յաղթիր քո մէջ նստած վշապին:

7. Թող քո առաջին միտքը ուրիշի մասին լինի, երկրորդը քո մասին:

8. Աճիր բարձրացիր ինչպէս հզօր կազնի:

9. Վաղն աւելի լաւ եղիր, քան թէ այսօր էիր կամ անցած օրը:

10. Կրիր աղնիւ խօսք սրտիզ մէջ և յիշիր քո նշանաբանը՝ «Յարձրացիր! Բարձրացուր!»:

### Սկառաների նրդումը

1. Աղնիւ խօսք եմ տալիս լինել հաւատարիմ հայրենիքիս և ժողովրդիս:

2. Կանեմ այն ամենը, ինչ որ ինձանից է կախւած:

3. Անշեղ կը կատարեմ սկառաների բոլոր օրէնքները և կը հալատակեմ պատւոյ դատարանին:

Օրէնքների, պատիրանների, ինչպէս և երդան բացուրութիւնը շատ լաւ ըմբընած պէտք է լինի ԱՌ բգ կարգի սկառաւը: Օղակապետը պէտք է պահանջի, որ

սկառաներն իրենց կատարած գործերով տան բացտարութիւն իւրաքանչիւր կէտի մասին:

Սկառաների հիմնադիր Ռուբերտ Բաղման Պառվի կենսագրութիւնը

Ռոբերտ Բաղման Պառվի ծնւել է Լոնդոնում 1857 թւն, փետրվարի 22-ին: Հայրը քահանայ էր և փլասոփայ, իսկ մայրը՝ եղիսաբէթ թագուհու յրջանի յայտնի հերոս Սմիթի ազգական էր:

Ռոբերտը փոքր հասակից սկսեց ինքնուրոյն կեանք անցկացնել, դեռ 3 տարին ծը լրացած, առանց կողմնակի օգնութեան նա կարողանում էր շորերը հանել-հազնել, իսկ երբ լրացաւ հինգ տարին, պահում էր օրւայ ծախսերի հաշիւը: Մինչեւ 12 տարիկան հասակը Ռոբերտը ազատ կեանք էր անցկացնում: Եղրօն և կամ ընկերների հետ միասին դրօսանքներ էր կատարում մօտակայ դաշտերում, անտառներում, գետերի վրայ: Զքոսանքներին աշխատում էին գտնել զանազան անսակ ծառեր, ծաղկիներ, քարեր, կենդանիներ, բարձրանում էին ծառերը թրուչուններ որսալու, բներ որօնելու: Վերցնում էին իրենց հետ վրաններ, կերպարի աման-

ներ, զանակը կոսին, մի խօսքով ինչ որ  
անհրաժեշտ էր, և գիշերում էին դուրսը,  
բաց երկնքի տակ:

Եսու պարզ է որ այդպիսի ոգու տէր  
աղան, ունինայով նման լըջապատ, փոքր  
հաստից պէտք է իւրացնէր Սկառուտի  
յատկութիւններ, այսինքն նընուրոյն  
կեանք դժւարին պայմաններից զուրս զա-  
լու միջոցներ և աշխատել՝ առանց ուրիշի  
օգնութեան դիմուու, Խորելտը երեք տարե-  
կան հասակէց, ներկայ մաքով, կատարեալ  
Սկառուտ էր:

Երրուրուու 12 տարին, նրան աւին  
զպրոց: Դպրոցուկան կեանքում զարձեալ  
ամեն բաւու Խորելտը աշքի էր ընկնում: Նա  
ունիք բարձրակողմանի տաղանդ, երգում էր,  
նուազում, նկարում և, որ գիմաւորն է, կօմիկ  
էր: Օքնում էր իրի ից վոքր ընկերներին  
ամեն բանու: Այնքան յառաջազէմ էր, որ  
իւրաքանչիւր տարի երկու դասարան էր  
փոխում: 1876 թվին, վիշջացնելով զպրոցը,  
մուսւ Օկսիուդի համալսարանը: Նոյն տարին  
Լոնդոնում սկսեց զինուրական զպրոցի  
մրցական բնութիւնները և սրովին տա  
գալուց երազում էր զինուրական զառնալ  
տալիս է քննութիւն և 718 ընդունողներից

Յ.րդ տեղն է բոնում, 1876 թի սեպտեմ-  
բերի 4-ին Ռոբերտին նշանակում են  
ՎԻԼ-դ հիմնակ գնդի զեկավար և ուղարկում  
Հնդկաստան:

Ռոբերտ Բադէն-Պաուլը մասն է Հընդ-  
կառասմում ութ տարի (1876 թ.-1884 թ.):  
Նրա կեանքը այդ շրջանի հետ շատ քիչ ենք  
ենք ծանօթ, որովհետեւ ազագուած տեղե-  
կութիւններ չկան, այլ մօզ տաել են Ռո-  
բերտի բանուուր զրոյցները: Վէտք է տաել  
որ Սկառուտ նէֆը չէր սրբու իր մասին  
խօսել:

Զինուրական կեանքի մէջ կատարում  
էր հիմախուզական աշխատանքները Խորել-  
տի կեանքը զանում է էլ աւելի հետա-  
քրեիր, բազմակողմանի, որիս ամայի երբ ի  
նկատի ենք առնում նրա սէրը զէպի բնու-  
թիւնը, կենդանական, բուռական աշխարհը  
և Հնդկաստանի ճախ բնութիւնը, որ նրա ա-  
ռաջ բաց էր անում ընդարձակ հորիզոնները:  
Նա աւեն կերպ աշխատում էր իր թէ նոդիկան  
և թէ ֆիզիքական յատկութիւնները յարմարե-  
ցնել տեղական պայմ ննուրու համ Փոքան: Էր  
անում օրերով սոված, ծարաւ թափանկու և  
երբեմն շտրաթներով կերակրում էր անուա  
ով բոյսերով, որսի տալի:

Թոքերտ Բագէն. Պառլը թէօրիայի մարդ  
շէր, սիրում էր գործ, նախ գործում էր,  
ապա նոր հանում և զրակացութիւններ.

1884 թ. նա առանում է զինւորական  
բարձր տիտղոս և անցնում է Հարաւախն  
Աֆրիկա, ուր մասնակից է լինում Անգլօ-  
թուրական պարտիալզմին։ Աֆրիկայում իր  
հետախուզութիւնների չնորհիւ այսպիսի  
հոշակ է ծերը բերում, որ նրան անւանում  
են «Մեֆատինգ քսդաքի պաշտպան»։

Հնդկաստանում և Աֆրիկայում Ռոքեր-  
տը գործնականորէն ծանօթացու կնանքի  
բազմաթիւ հրամայական պահանջների և վայ-  
րենի ցեղերի սովորութիւնների, յատկու-  
թիւնների հետ։ Եւ երբ 1887 թ. վերադար-  
ձաւ Անգլիա, տեսաւ որ կոլտուրապէս  
զարդացած անգլիացին իր յատկութիւննե-  
րով, բնաւորութեամբ շատ թոյլ է աւ զօր,  
քան կիսազայրենի մատարելացինները։ «Ա-  
մենքը շարժողութեան մէջ են, — գրում է նա,  
— բայց ոյդ շարժ մներից շար գործա-  
զրում են անօգուտա», նազաց, որ հզօր Անգ-  
լիան երկար ժամանակ չի կարող ի խել իս-  
գաղութների և նոյնիսկ իր երկրի վրայ, որով-  
հետեւ մի քանի տասնեակ տարուց յետոյ  
նոր սերունդը լինելու է հրանդուա, բնաւո-

րութեամբ թոյլ անկազմակերպ եւ ահա,  
հիմնած իր տարիների անձնական փողոձերի  
վայ, Ռոքերտ Բագէն. Պառլը հիմքէ զը-  
նում Սկառուտական կազմակերպութեանը՝ նը-  
պատակ ունենալով դուրս բերել փոքրերին  
և ուղարկ գաղջ օդից գէպի բնութիւնը, և  
այնտեղ, խաղերի, բնքնու ըսյն աշխատան-  
քի և մանկան հոգուն մօտ զրոյցներով, բարձ-  
րացնել նրանց Փիզիքական, բարոյական,  
մտաւոր կարողութիւնները և պատրաստել  
պիտանի քաղաքացիններ։

Կարճ ժամանակում ոկառուտական  
շարժումը Անգլիայից տարածեց Ֆրան-  
սիա, Ամերիկա, Իտալիա, Գերմանիա,  
Օւլսաստան, Պոլիս, համարեա ամեն տեղ,  
և այժմ սկառուցայան գրօշակի տակ, առանց  
ազգի, սեօի խտրութեան, կազմակերպւած  
են տասնեակ միլիոնուոր երիտասարդներ,  
որոնք առաջ են տանում ազգերի համե-  
րաշխութեան գործը, ձգում գէպի երջա-  
նիկ կեանք։

Ի՞նչպէս պէտք է սալիւդ տալ

Սկառուտի սալիւդը նշան է յարգանքի  
և քա, հիամական վերաբերմունքի, երբ  
առպետները պատահում են իրար, ոչ

ձեռները բարձրացնում են՝ իբր նշոն, որ  
ոչ մի թշնա հական գործ չունեն գիմացինի  
հետ:

Սկառուղ սալիւլ տալիս է աջ ձեռ-  
քով՝ բութ (մած) մատի ծայրը փոքր մատի  
վոայ դրած և երեք մատը դէպի վեր ուղ-  
ղած: Երեք մատը ցոյց է տալիս և որ  
Սկառուղ հաւատարիւ է հայրենիքին և ժո-  
զովը զին: 2. ճշգրիտ կատարում է սկ ու-  
տական գուանանը: 3. հպատակում է  
զեկավարների հիմմաններին:

Ս առուղ Սկառութիւ տալիս է կէս սա-  
լիւլ՝ մինչ ուրո. օղակապետին, վաշտապե-  
տին, սկառուտապետին, գրօշակին, ննջեց  
եալին ամբողջական սալիւլ՝ մինչ ճա-  
կատը:

### Սկառուղը չի ծխում

Ծխելը ոչ միայն առողջութիւնն է  
վասում, այլև ցոյց է տալիս կամքի թու-  
լութիւնը: Ճնձերին նմանեւու ողորմեկի  
ցանկութիւ ը: Սկառուները չեն հետեւում  
Ճնձերի թուլութիւններին, այլ ընդուինա-  
կում են նրանց ուժը: ակնաւթիւնը, կամքը:  
Սկառուները հետեկիով առանեներին՝ չեն  
ծխում:

Ոչ ծխում է նա Սկառուտ չէ:



«ՎԱՀԱԳՆ» ԱԿԱՈՒՏ

## «ՍԿԱՌԻՏԸ ՄԻՇՅ ՊԻՑԻ ՕԳՆԵ ՈՒՐԻՇՆԵ- ՐԻՆ»

«Վահագն Սկառու! Միշտ պատրաստ  
եղիր կատարելու Սկառուտական այդ վեհ  
պարտականութիւնը. Գիտցիր, որ դու կոշ-  
ւած ես օգնելու խեղճերին, թշւառներին,  
փիրաւորներին, և քո օգնութիւնը լինելու է  
շուտափոյթ, անմիջական։

Օգնութեան բռպէին եղիր հանգիստ,  
պազարիւն և մի շփոթւիք. Նախ մտածիր՝  
ապա գործիր առանց տառանւելու, արագ,  
կոշուկ։

Ցոյս մի դնիր ուրիշի վրայ և մի հաւա-  
տաք մարդկանց խոստումներին. Եթէ վտան-  
գը լուրջ է, մի շոյց տայ հիւանդին, իսկոյն  
գնա բժշկի յատեից, բայց աշխատիր. որ բո-  
լորը դու անես։

Մի հպարտանար քո օգնութեամբ,  
գիտցիր, որ կատարում ես քո բարոյական  
մեծ պարտականութիւնը։

«Սկառուն ուրիշի օգնութեամբ չի դիմում,

«Վահագն» Սկառու, քեզ և ուրիշ-  
ներին օգնելու համար, լաւ ծանօթութիւնն  
պէտք է ունենալու բժշկութան շուտափոյթ

օգնութեան հետ. Զէ որ կեանքդ վտանգի  
ես ենթարկում մարդկանց փրկելու, պաշտ-  
պան ես կենդանիների, բոյսերի, բարձրա-  
նում ես լիսները, մազլցում ծառերի զար-  
գաթները և այլպիսով միշտ վտանգի ես  
ենթակայ. Քո բժշկական շուտափոյթ օգնու-  
թիւնը փրկելու է քեզ և շատ շատերին մա-  
հից։

Արդ, լսիր և կեանքի մէջ գործադրիր  
այս ամենը, ինչ որ կը կարգաս ստորե։

Ինչպէս խնամել վէրթերը

Վէրքի խնամելուց է կախւած հիւան-  
գի առողջութիւնը. Վէրքը խնամելու նպա-  
տակն է. ա) պաշտպանել դրսի մասսակար  
նիթերից, բ) ոչնչացնել վէրքի մէջ գտնւած  
միկրոպաները, գ) նրան գնել մաքուր վիճա-  
կի մէջ։

Եթէ վէրքը չը խնամենք և կամ ան-  
զգուշութեան մոտնենք, կը մեծանայ և այն-  
քան վտանգաւոր կը գտնայ, որ հետզե-  
տէ ատրածելով մահւան պրածառ կարող  
է լինել.

Վէրքը խնամելու առաջին և ամենա-  
կարեոր պայման մաքրութիւնն է. Նախ  
քան վէրքին մօտենալը, օճառով ձեռները

պէտք է լաւ լւանալ և թրջել ապանեխիչ հիւթով, օրինակ՝ օղիով, սպիրտով, սուլեն մայով։ Վիրակապ գործիքները պէտք է դնել ջրով լի կաթսայի մէջ և լաւ եռացնել. Այդ բոլորը պէտք է գործադրել, որպէսզի օդի մէջ և գործիքների վրայ գտնւած միկրոպ ները ոչչշահան և վերքի մէջ ջընդնեն։

Վերքի վրայ դրւելիք նիւթերն և պէտք է լրնեն ջատ մաքուր։

Վերքերը կապելու համար միշտ հետներ, դ պէտք է ունենաց հետեւալ անձրաժշտ գործիքներն ու նիւթերը. — ունելիք (մաշա), միկրատ, գործիքներ եռացնել և աման, բամբակ, պաստառ (կոլենկոր) և զանազան լայնութեամբ վիրակապեր։

Սկսուաների փողկապը գործ է դրւում գլխի, կրծքի, ազդքի վերքերը կապելու համար։

### Վիրակապ

Հնարաւոր չէ գրով և կամ խօսքով բոյց տալ, թէ ինչպէս պէտք է կոպել վէրքերը. Սովորելու համար անհրաժեշտ է փորձեր անել. բայց վերքը կոպելիս ի նկատի ունեցէք հետևեալը. ա) վիրակապի ծալը, ծալքի վրայ չպիտի գայ, բ) վիրակապը

(1004 / 15488) 16480-58

Հ.Ս.Խ. ՀԱՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Հ.Ս.Հ.Պ. ԱՊՈՒԹՈՒՅՆ ԲԽՈԼՈԴ  
ՀԱՅԻ ՊԵՂ ՄԻՋԱՆԱԿ ՈՐՈՇՄԱՆ ԿՈՐՑՀ  
7/31 ՈՐՈՇՄԱՆ ԿՈՐՑՀ  
արիւնը համար ԱՅՀՀՀՀ ՎԻՐԱՎԱՐ ԱՊԷՆՔ է կա-  
պել վարի կողմէու կի թաթիւ Վարնի կոզմը։

Հարածներ եւ յոդի խախտում

Հարածները լինում են երկու տես-  
ակ. ա) թեթէ արւած, երբ վիասում են  
կաշին և նրա տակ գտնւած մկանները, բ)  
ծանր հարւած, երբ վիասում են ոսկը,  
յօդերը և կամ նկրին գործարանները՝ ստա-  
մոքսը, աղիքները, փայծաղը և այլն։

Թեթէ հարւածը բռնելու համար պէտք  
է հարւածի ենթարկուծ մասը հանգիստ,  
բարձր բռնած պտնել, թեթէ մասսանը և  
օգտակար է, բայց կարծ ժամանակում ա-  
ռողջացնելու համար պէտք է ցաւոտ տեղը  
ապացնող կոմպրէս կոպեր։

Տաքացնող կոմպրէսը բազկացած է  
երեք շերտից, առաջին շերտը մի քանի ծալ  
քաթան է, վերքի մեծութեան սառը ջրով  
թրջած և պինդ քամած երկրորդ շերտը  
անթափանցիկ պաստառ (կարենկոր) է՝ քա-  
թանից մի քիշ մեծ երրորդը բազկաց ծէ  
բամբակից, որը ծածկելու է առաջին և երկ-  
րորդ շերտերը։

Տաքացնող կոմպրէսը պէտք է փաթա-

թել երկար, լայն վիրակապով և կարելի է  
փոխել օրը երկու երեք անգամ:

Կոմպրէսի փոխարէն (ինչպէս զիւղե-  
րում ընդունւած է) օգտակար է՝ գործածել  
տաք, թարմ մորթի, որը նոյն նշանակու-  
թիւնը և ազդեցութիւնն ունի, ինչ որ տա-  
քացնող կոմպրէսը:

Հարւածը, երբ վնասում է ներքին գոր-  
ծարանները, պէտք է քանդել հիւանդի գո-  
տին, կռակները, իսկ ուշագնացութեան  
գէպում՝ ստոր ջուր սրսկել և անմիջապէս  
դիմել բժշկին:

### Ցողերի խախտում

Յօդը երկու շարժակ ու սոկրի միա-  
ցումն է: Յօդը խախտում է, երբ սոկրնե-  
րից մէկը ուժեղ հարւածից պատում է  
շրջապատող պարկը և գուրս գալիս:

Խախտած յօդը պէտք է աշխատել  
շուտ տեղը դցել: Մինչև բժշկի գալը ոչ մի  
փորձ չպէտք է անել սոկ ը տեղը դցելու:  
Հիւանդին պառկեցնելով անշարժ, պէտք է  
ապասել բժշ ին:

Սոկրի կոտրւելը

(Սոկրաբեկում)

Սոկրը կոտրում է, երբ հանդիպում է

ուժեղ և որուածի: Ոսկրի կոտրւելու տեսակ-  
ները շատ են, բայց բաժանուամ են երկու  
գլխաւոր մասերի. ա) հասարակի, երբ ոսկ-  
րը կոտրւում, բաժանուում է երկու մասի.  
բ) ըարդ, երբ ոսկրը կոտրւում է մի քանի  
տեղից:

Ոսկրի կոտրւելուց հիւանդը սաստիկ  
ցաւ է զգում. կոտրւած մասը ուռչում, սկա-  
նում է:

Բաւական գժւար է ճշգրիտ որոշել, թէ  
իսկապէս ոսկրը կոտրւել է թէ ոչ, մանա-  
ւանդ երբ կոտրւածը հասարակ է:

Ճշգրիտ որոշելու համար պէտք է ու  
շագրութիւն դարձնել հետեւալ նշաններին.  
1) կոտրւած մասը կարև է լինում. 2) կուալք-  
ւած սոկրը սովորուկան շարժումներից  
գւար, անբնական շարժումներ է անում, 3)  
թեթև շօշափումից սաստիկ ցաւ է զգացւամ.  
4) կոտրւած ոսկրի ծայրերը իրար քւեւուց  
ձայն է լաւում (այդ փորձը պէտք է կատա-  
րել շատ զգուշ):

Ոսկրի կոտրւելու գեպքում Սկառափ  
անմիջական օգնութիւնը պէտք է լինի ան-  
մ. ջապէս բժշկի յետից վազել: Մինչև բժըշ-  
կի գալը հիւանդին պէտք է անշարժ գտա-  
լիցնել: Կոտրւած ոսկրը անշարժ պահելու

համար գործ պէտք է ածել կաղապարներ, (ասու), Կաղապարներ կարելի է պատրաստել լրտպիներից, կարդոնից, փայտից, ծառի ճիւղից, անձրևակալից, հրացանից, սինից, մի խօսքով Զեր ձեռքի տակ գտընած ամեն մի պինդ, յարմար տառկայից:

Զարգւած ոսկրը կաղապարի մէջ զնելիս պէտք է աշխատեն մի քանի հոգի, մէկը բանում է կոտրւած ոսկրի վերին մասը, միւսը ներքենի և ամեն մէկը քաշում է իր կողմը, այնպէս որ կոտրւած ոսկրի ծայրերը իրարից հեռանում են, Այդպէս պահում են, մինչեւ որ երրորդը նահաւպէս պատրաստած կաղապարը ամրացնում է:

Երբ ջարդւած մարմինը գրիբ աղապարի մ.ջ. այնունետեւ մեծ զգո շոթեամբ պատզարա ով (Խօսութ) պէտք է տեղափոխել բժշնի մօտ և կ. մ հիւանդան ց:

Հիւանդին տեղափոխելու հօմար Սկասւաց նախօրօք ծանօթ պէտք է լինի փոխագրտկան մի քանի ձեռի հետ:

### Արինահոսութիւն

Մեր մարմին ամեն կողմը տառածած է արին: Արինը հոսում է երակներով և կարկերակներով: Զարկերակներով մաքուր

(թթւածինով հարուստ) արինը սրաից դուրս է զնում կերակրելու մարմինը, երակներով անմաքուր (հարուստ ածխաթթւուավ արինը վերագանում է սիրտը, այնտեղից թոքելը՝ մաքրելու:

Բաւու կան է ասեղի ծայրով ծոկել կաշու վերին չերտը, իսկոյն արինը գուրս կը գայ: Արիւանոսութիւնը լինում է երկու տեսակ. ա) երբ արինը դուրս է ենում կամաց կամաց և ունի մուգ կարմիր գոյն. բ) երբ արինը դուրս է ծայթքում և ունի բաց կարմիր գոյն:

Առաջին գէպքում կտրւածքը երակ է, որը, ինչպէս ասինք, արինը տանում էր դէպի սիրտը: Արիւանահոսութիւնը դադարեցնելու համար պէտք է վերակապով սեղմել կտրւած տեղից աւելի վար:

Երկորդ գէպքում կտրւածք զարկերակ է, որի միջով արինը սրտից գնում է մարմին մասերը կերակրելու: Արինահոսութիւնը զադարեցնելու համար կտրւած տեղից վեր այսինքն սրտին աւելի մօտ վերակապով պէտք է ամուր սեղմել եթէ վրակապ չունենաք թաշկինակով, փողկապով և կամ շատիկի թևով կարող է ել կտպել:

Եթէ զդի երակը և կամ զարյերակն է կարւում, չէք կարող վիզը ամուս սեղմել. պէտք է բութ մատով կարւածի վրայ սեղմել, մինչեւ օր բժիշկի գայ.

Արիւնանոսութիւնը դադարեցնելուց յիտոյ մեծ զգուշութեամբ հոգ պէտք է տռնել վէրբը բուժելու:

## ՊԱՏԱՇԱՐՆԵՐ

### ԽԵՂԴԻՈՒՄ

Ամոն մի սկառւա պէտք է գիտենայ լող տռալ ոչ միայն իրեն համար, այլ նաև օգնելու խեղդողներին,

Եթէ ընկնում ես խոր ջրի մէջ և լու զալ շգիտես, յուսահատական ճիգեր գործ մի զնիր և մի ուիր ջրի զէմ. աշխատիր գլուխիդ յետ ձգել, ձեռներդ մարմնիդ ռւդ. զութեամբ զասաւորիր և խոր շունչ քաշիր. Այլպիսով թռքիրդ լայնանալով մարմինդ կը թիթեանայ և դէմքրդ ջրի երեսը կը թնայ. Եթէ խեղդողին օգնութեան ես հասնում, նզիր շտո զգոյշ, որովհատե շատ զէպէերում, նոյնիսկ լաւ լողացովը, երբ մօտենում է խեղդողին, վերջինս պինդ փաթաթառում է

նրան և այդպիսով երկուսն էլ խեղդւում են. Մօտեցիր խեղդողին յետելից, երկու ձեռքերով ամուր բռնելով նրա թևերից, մէջի վրայ լող տալով դուրս հանիր ափու

Օգնութեան դէպօում օգտակար է ու նենալ խցան, գտի, երկար օօղ, օղով լի փամփուշտ, պարան:

Երբ խեղդողին հանեցիր ջրի եղերքը, պէտք է մերկացնել և զիմել արհեստական շնչառութեան: Բայց նախապէս պէտք է մաքրել քիթը, բերանը, կոկորդը աւազից, տիզմից, նրծքի, փորի մէջ հաւաքւած ջուրը հասացնելու համար պէտք է պառկեցնել փորի վրայ և լաւ ճնշել:

### ԱՐԻԵՍՏԱԿԱՆ ՀՆՉԱՌՈՒԹԻՒՆ

Արհեստական շնչառութիւնը ազդում է ոչ միայն թօքերի, այլ նաև օրաի վրայ: Արիեստական շնչառութեան ձևերը շտա են, բայց նրանցից գործածականը երկուսն է:

1. Հիւանդին պառկեցրէք և նսի վրայ, կուրծքը յենած մի բարձր առարկայի, օրինակ՝ ծու կի աթոսի, բարձի վրայ. Հիւանդին դարձրէք մէկ աջ, մէկ ձախ կողքին և նորից սկզբանական դիրքը տւէք: Աջ ու ձախ գարձնելիս կուրծքը լայնանում է

և տեղի է ունենում ներջնում, իսկ եշխար վրայ պառկեցնելիս կուրծքը սեղմում է և տեղի է ունենում արտաշնչում:

2. Հիւանդին պառկեցնում են մէջքի վրայ, ստքերը ձգում մարմնի ուղղութեամբ, ձեռները բարձրացնում են նախ վեր, ապա յետ և նորից արագութեամբ դէպի կուրծքը և թներին տալով բնաւան զիրք, երկու կողմից ամուր սեղմում են կուրծքը, թները զեր և յետ տանելիս կուրծքը լայնանում է և տեղի է ունենում նեշնչում, իսկ դէպի կուրծքը սեղմելիս՝ արտաշնչում:

Այնեստական շնչառութեան ալդ զոր ծողութիւնը կտարելիս մի ուրիշը պէտք է բռնի հիւանդի լեզուն, արտօշնչան ժամանակ լեզուն դուրս պիտի քաշի, իսկ ներշնչան ժամանակ բաց պիտի թողնի:

Ամեն մի Սկառուտ նախօրօք վարժ ած պէտք է լինի արհեստական շնչառութեան այդ ձեերի հետ, որովհետեւ այդ գործողութիւնները պէտք է կտարել ոչ միայն խեղուղների նկատմամբ, այլ նաև ուշազբնացութ ան գլափեռում:

### Կայծակնահարում

Կայծակնահարումը տեղի է ունենում գլափառապէս դաշտում, երբ փոթորիկի

ժամանակ պառպարւում են մենաւոր նառի և կամ հեռագլական սիւնի տակ:

Երբ կայծակը ուղղակի մարդու վրայ է ընկնում, սպանում է տեղն ու տեղը, իսկ երբ հարւածը հեռաւից է, վիրաւորւածը ընկնում է զետնին ուշաթափ, ոտները, ձեռքերը թուլանում են. կայծակի հարւածի տեղը մեծ այրածք է առաջանում:

Կայծակի հարւածից առաջ եկած այրածքը պէտք է բժշկել ոսկորական այրածքների պէս:

Կայծակնահար հիւանդին անմիջապէս պէտք է տանել հով տեղ և առանց դադարի դիմել արհեստական շնչառութեան:

Շատ տեղերում հիւանդի մարմինը թաղում են հողի մէջ, բայց գրանից դրաւկան արգիւնք չի ստոցւում:

Փոթորիկի ժամանակ չպէտք է կանգնել դաշտի մէջ և կամ ծառի տակ. աւելի նպատակայարմար է և օգտակար՝ պառկել որեէ փոսի մէջ և սպասել, որ փոթորիկը անցնի:

### Թունաւորում

Թունաւորումը տեղի է ունենում զանազան քիմիական բաղադրութիւններից

կամ վասակար, փչացած նիւթեր ընդունելուց:

Թոյները լինում են այրող և թմրեցնող, այրող թոյների շարքին են պատկանում մկնդեղը, աղային, կարբուտոն թըթուտները Այդ նիւթերը այրում են զըրթունցները, կոկորդը, ստամոքսը:

Թմրեցնող թոյներն են՝ մորֆի, ալկոհոլ, գառը նուշ, ծխախոտ, Այդ նիւթերը ազդում են ներարկերի և սրտի վրայ և տուաջ են բերում թմրութիւն:

Թունաւորածին օգնելու համար նախ պէտք է խմանալ ինչ նիւթից է թունաւորւել և եթէ մօտիկ զեղատուն կայ՝ անմիջապէս յայտնել:

Եթէ թունաւորւել է թթւուտային հեղուկից, պէտք է խմացնել մեծ քանակութեամբ ջրային լուծւածքներ, զլիաւորապէս սոդա, կալիոն, կրաջուր:

Եթէ թունաւորումը ալկալի է, պէտք է խմացնել հիւանդին քացախ, լիմոնի ջուր, թթու զրած մրգեր:

Տերանի, կոկորդի այրւածքները բռնժելու համար, օգտակար է խմացնել իւզ, ալիւրի ջուր, ջրի մէջ լուծւած ձևի սպիտակուց, շաքարածուր և այն:

Կաթը շատ օգտակար հակաթօյն է բոլոր սուր թոյների:

Թոյնը ստամոքսից յետ թիրելու համար (փոխեցնելու) պէտք է մատով և կամ փետորի ծայրով փոքր լիզակը սեղման կարենի է խմացնել աղաջուր:

Թոյնը աղիքներից հեռացնելու համար պէտք է խմացնել մի գզալ անգլիական աղ:

Թմրեցնող թոյների գէմ օգտակար է խմացնել մուգ թէյ, սուրճ, Թոյլ միջ տայ, որ հիւանդը քնի և կամ նստի: Ուշագնացութեան գէպքում ջուր սրսկել և կամ նաշտագիր դէմ անել քթին:

### Հ Բ Դ Ի Ը

Հրդեհի ժամանակ մի շփոթւիր, իսկոյն յայտնիք բնակուրանում ապրողներին վտանգի մասին, իմաց տուր մօտուկայ ոստիկանատունը և հրդեհաշէջ գէպօյին (Ժկովская 3, Նիկոլաևская 116), Հարազգրիր հարևաններին, որ բերեն սանդուխ, փափուկ բարձեր, գորգեր, որպէսզի բնակարանում մացողները կարողանան վայր թոչել:

Երբ հրդեհաշէջները կը գտն, աշխատիր հեռացնել հանգիստես ամբոխին, որ չը խանգարեն հրդեհաշէջների աշխատանք:

Ները, Կարիքի դէպքում օգնիր ևան նրանց:  
Եթէ այրում է ծխնելոյդը, աղ ցանե-  
ցէք և թաց շուրջ բերանը փակէք, որ-  
պէսզի օդ չմտնի մէջը,

Երբ կրակը կամաց կամոց եւ թալով  
ժաւալում է, առաջն առնելու համար ցա-  
նէք աղ, մոխիր և կամ ալիւր:

Եթէ մտնում էք սենեակ՝ դուրս հա-  
նելու երեխաներին, թոյլերին, հրանդնե-  
րին, ձեր քթթը և բերանը պէտք է ծածկէք  
թաց թաշկինակով և աշխատէք. կուացած  
քայլել Երբ տեսնում էք, որ մէկը այրում  
է, իսկոյն պառկեցրէք նրան գետնին և  
փաթաթէք վերարկուով, ադէալով, բայց  
նդէք զգոյց որ դուք չայրուէք: Եթէ դու  
ես այրում և ոչ ոք չի գալիս քեզ օգնելու,  
պառկիր գետնին և զլորւիր:

Եթէ մէկը ուշաթափւի, վերցրէք ձեր  
ուսերին և հեռացրէք ծխից մի ապահով  
տեղ: Ուշքի բերելու համար զիմէք արհես-  
տական շնչառութեան:

## ՓՈՒԹԲՈԼ

### ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մարմար և հոգու զարգացմանը մեծ  
գարկ է տալիս խաղը: Խաղը մանւկին թար-  
մացնում, հանգստացնում է, զարգացնում է  
նրա մէջ ընկերական ոգի: բարոյական և  
մարդասիրական զգացմունքներ:

Խաղերն իրենց ընոյթով, ձեռվ բաժան  
ում են բազմաթիւ տեսակների: Կան խա-  
զիր, որոնք զարգացնում են մանուկի ֆի-  
զիքականը կամ բարոյաւանը. Կան խաղեր,  
որոնք զարգացնում են մտաւորը: Ֆութբոլը,  
որը համարում է խաղերի թագաւոր, ունի  
վերոլիշեալ երեք առաւելութիւնը:

Ֆութբոլը զարձնումէ երեխային ձկուն,  
ճարպիկ, աշխայժ, քաջ, զիմացկուն: Ֆութբոլը  
խաղալիս մարմնի բոլոր անդամները՝ սիրտը,  
թոքերը, թուերը, ոտները, իրանը, վիզը, մի  
խօսքով ամբողջ մարմինը գտնում է շար-  
ժողութեան մէջ:

Ֆութբոլը զարգացնում է բարոյա-  
կանը. ամեն խաղ օբէնքներով է կառավար-  
ում, բայց ֆութբոլի մէջ օբէնքներն ու

կանոններն աւելի են շեշտամած։ Նա սովորեցնում է ճշտագահութիւն, ճշմարտութիւն և հարկադրում է խաղացողին հնազանդութեամբ կատարել օրէնքները։

Երեխան երբ մօտենում է գնդակին, հարկադրուած է մտածել, հաշուել իր ընկերների հեռաւորութիւնը, հակառակորդից գընդադրէ փախցնելու միջոցը, հարւածի ուժն ու ուղղութիւնը, մի խօսքով գործում է նրա ուզեղը, և ինչպի՛րեց վայրկենական պէտք է որոշեն և գործադրեն։

Ահա գաստերակչական մեթոդներ, որոնց շնորհիւ համաշափ կերպով զարգանում են երեխայի ֆիզիքական, բարոյական, մտաւոր կարողութիւնները, որոնք՝ երեխայից հեռու վանելով ձուլութիւնն ու անդորքութիւնը, մարմնի թուլութիւնը՝ մաքուր, տուղջարար օդի մէջ, ջինջ արևի ճառագայթների տակ դարձնում են նրան առողջ, կայտառ, աշխոյժ, զւարթ և քաջ։

Խաղը սկառտիզմի առանցքն է, իսկ Փոթբուլը Սկառտի անբաժան ընկերը, որի օրէնքների, կանոնների հետ ամեն մի Սկառտի պարտականութիւնը պէտք է ինի լար, ծանօթանալ և գործադրել առանց շեղումի։

### ՖՈՒԹԲՈՈԼԻ ԴԱՇՏԸ

Ֆութբոոլի դաշտը պէտք է լինի հարթ, նախ քան խաղ սկսելը՝ հարկաւոր է խաղավայրից հեռացնել քարերը, թփերը և հաւասարեցնել փոս տեղերը Ֆութբոոլի դաշտը լինում է զանազան մեծութեան, բայց ընդունեած է հետեւեալ մեծութիւնը։—Երկարութիւնը «Է» գիծը 144 արշ., լայնութիւնը «Ա» գիծը 94 արշին։

Կոլի գիծը գծելու համար նախ կը դրանք «Ա» գծի կիստրոնը, և կենտրոնից աջ և ձախ կողմը կը չափենք հինգ արշին և կը հաւասարնենք կոլի ձողերը։ Այժմ որոշենք կութիպը գիծը։ Կոլի ձո՞ւ չերից աջի ձախ կը չափենք  $7\frac{1}{2}$  արշին և զէպի ներս  $7\frac{1}{2}$  արշ։ «Ա» գծից զուգահեռական կը միացնենք ներսը քաշած գծերի ծայրերը, կը սահնանք 25 արշին երկարութիւն ունեցող «Գ» գիծը։ Կութիպը կարող է այդ գծի ներսը գտնուող տարածութեան մէջ ազատ շարժւել, բայց գնդակը ձեռքին իրաւունք չունի գիծից դուրս գալու։

Այժմ որոշենք հատուցման տարածութիւնը և կէտը։ Կոլի ձողերից աջև ձախ կը չափենք  $22\frac{1}{2}$ , իսկ զէպի ներս  $22\frac{1}{2}$  արշին։ Ներսի ծայրերը «Ա» զուգահեռական կը

«Ա»

$7\frac{1}{2}$	5	5	$7\frac{1}{2}$
արշ.	արշ.	արշ.	արշ.

$22\frac{1}{2}$			$7\frac{1}{2}$
արշ.			արշ.
25 արշ. «Գ»			$22\frac{1}{2}$
արշ.			

55 արշ. «Դ»

«Բ»

$12\frac{1}{2}$

«Ե»

55 արշ.

25 արշ.

$22\frac{1}{2}$			
արշ.			

5 արշ.

(Փութքովի դաշտը)

միացնենք և կը ստանանք «Դ» գիծը  
որի երկարութիւնն է 55 արշին. Այդ գիծի  
մէջ գտնած տարածութիւնը կը լինի  
հատուցման տարածութիւն։ Հատուցման  
կէտը գտնելու համար «Ա» գծի կենտ-  
րոնից դէպի սերս կը չափենք 16 արշին։  
Եթէ խաղի ժամանակ խաղացողներից մէկը  
խախտի օրէնքը, հակառակորդը գնդակը  
այդ կէտից խփելու է դէպի կողք։

Դաշտի կենտրոնը գտնելու համար «Բ»  
գծերի կէսերը կը միացնենք իրար և ստա-  
ցած «Ե» գծի կենտրոնից կը քաշենք մի-  
շան, որն ունենալու է  $12\frac{1}{2}$  արշին շառա-  
վիդ։

ՑՈՒԹԲՈՒԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Խաղացողների թիւը

Իւրաքանչիւր կողմ բազկացած պէտք  
է լինի 11 հոգուց, որոնք շա և լու են հե-  
տեւալ կարգով. հինգը՝ յառաջապահներ  
(forward), երեքը՝ միջապահներ (half-back),  
երկուսը՝ վերջապահներ  
(back). Խոկ մնացած մէկը՝ բերդապահ (goal  
keeper)։

Խաղի տերողութիւնը

Խաղը տևամ է 90 րոպէ. 45 րոպէին  
յետոյ տասը ըսպէ ընդմիջումն վճռական

մրցումի ժամանակ, երբ մըցող կողմերը  
ոչ մի արդիւնքի չեն հասել, ընդհանուր  
համաձայնութեամբ կարելի է խաղը երկա-  
րացնել դարձեալ 30 րոպէ 15 րոպէից յե-  
տոյ հինգ րոպէ ընդմիջումով \*):

Կոլերի ընտրութիւնը եւ առաջին հարւածը  
հարւածը, պէտք է որոշել փոխազարձ հա-  
մաձայնութեամբ, կամ վիճակով. Մյն կող-  
մը, սըը իրաւունք ունի առաջին հարւածը  
տալու, պարտաւոր է հարւածը տալ հակա-  
ռակարդի կոլի ուղղութեան և մինչև որ ա-  
ռաջին հարւածը չը արւի, հակառակորդ իոդ-  
մի յառաջապահները իրաւունք չունեն 12—  
13 քայլից աւելի մօտենալ, և մինչև որ խա-  
ղը չը սկսէի՝ ոչ մի կողմի յառաջապահն իրա-  
ւունք չունի սահմանն անցնելու:

Կոլերի փոփոխութիւնը.

Խաղի կէսից միայն կարելի է կո-  
ւերը փոխել, և պարտած կողմը իրաւունք  
ունի առաջին հարւածը տալ

\*.) Տեղէ սկսվեան պահանով որինքները  
տալիս նը շատ համեստաւ.

Գնդակը գծից դուրս

Եօթ գնդակը խաղաղաշախի կողքի սահ-  
մանի գծնցից և կամ կ-լի գծերից դուրս  
ենի, խաղը սուլիչով պէտք է գաղտարեցնել.

Գնդակը ներս նետել

Եթէ գնդակը դուրս է գնացել կողքի  
սահմանի գծերից, դուրս հանող հակառակ  
կողմի խմբից մէկը, գնդակը դուրս ելած  
կէտից, երկու ձեռքով, առանց թոշելու,  
գնդակը պէտք է դցի ներս. Եթէ գնդակը  
անցնի կոլի միջից, կու չպէտք է հաշեել,  
մինչև որ մէկ ուրիշը գնդակին չը խփի.

Եթէ գնդակը դուրս է գնացել կոլի  
գծից (ոչ կոլի միջից) և այդ կողմի խազա-  
ցողեներից մէկը զիպել է գնդակին, այդ ժա-  
մանակ գնդակը պէտք է գնել կոլի տարա-  
ծութեան մէջ տեղը և այդ կողմի խա-  
զացողներից մէկը ուաքի հարւածով խազը  
վերսկսելու է, Բայց եթէ նոյն կողմի խա-  
զացողներից մէկը գնդակը գծից դուրս է  
հանել, այդ դւյպում հակառակ կողմի խա-  
զացողներից մէկը իրաւունք ունի, ամենա-  
մօտ անկիւնից, Դրօշակից երեք քայլ ներս  
գտնող կէտից, գնդակին հարւածել երկու  
դեպքում էլ, մինչև որ գնդակին չը հարւա-

ծեն, հակառակորդ կողմերը չեն կարող քայլից աւելի մօտենալ:

### Օրինազանցութեան դէպում հնչպէս ալէտր է վերսկսկել իրադր

Եթբ թիւրիմացութեան և կամ որ և է գէպքի շնորհիւ խազը ժամանակաւորապէս ընդհատւել է և գնդակը կողքի գծերից և կամ կոլի գծերից գուրս է գնացել, իրաւացարը գնդակը ողի մէջ է նետում ձիշտ այն տեղից, որտեղից որ վէճը ծագել է, Երկու կողմերից և ոչ մէկը իրաւոնք չունի գնդակին խփել մինչև որ գնդակը գեանին Ձ դիմէլ:

### Իրաւարարի պարտականութիւնը

Իրաւաբարը ընտրում է մրցող կողմերի համաձայնութեամբ և լինելու է չէզոք, իրաւաբարը պարտաւոր է խազի օրէնքները յարգել և գործադրել, նրա որոշումը պարտադիր է լինելու երկու կողմերի համար:

Իրաւաբարը իր կողմից նշանակում է իրեն երկու օգնականներ, որոնք կանգնում են դաշտի աջ և ձախ կողմը և հակում խազը, Օրինազանցութեան դէպում նրանք

յայտնում են իրաւարարին, իրաւարարի գործը շատ մեծ է և նրանից է կախած խազի յաջողութիւնը,

### Օրինազանցութիւն եւ կարգապահութիւն

Խաղի մէջ բացարձակապէս արգելւած է հակառակորդին բոթել, քացի տալ, ստը գնել, քաշել, նաև այլ միջ ցննորի դիմուլ Խաղի սկզբից մինչև վերջը պէտք է պահպանել սառնասրութիւն, մի բան, որ բացակարում է հայերիս մէջ:

Թոյլատրելի չէ երկաթ ունեցող կօշիկ-ներով խաղար:



ԵԿԱՌԻՑՆԵՐԻ ՀԵԽԱԳՐԻ ՆԵԱՆՆԵՐ  
(Մօրզի այբուբենը դասաւորած ձեռով)

<i>b, է</i>	<i>s</i> —
<i>r</i>	<i>v</i> —
<i>u</i>	<i>n, օ</i> —
<i>z, օ</i>	<i>c</i> —
<i>ll</i> —	<i>l</i> —
<i>h</i> —	<i>q</i> —
<i>q</i> . . .	
<i>th</i> —	<i>t, p</i> —
<i>bh</i> —	<i>g</i> —
<i>b, r</i> —	<i>h, t</i> —
<i>ʒ</i> —	<i>g, զ</i> —
<i>դ</i> —	<i>զ, օ</i> —
<i>l</i> —	<i>ձ</i> —
<i>ժ</i> —	<i>թ, փ</i> —
<i>Ը</i> —	<i>զ, ք</i> —
<i>Ծ</i> —	<i>օ</i> —

## Յ Ա Ն Կ

1. Ներածութիւն.
2. «Վահագն» Սկ. կազմ. նպատակը
3. Սկառատների օրէնքները
4.       >                  Պատւիրանները
5.       >                  Երդումը
6. Բ. Պ. կենսադրութիւն
7. Ինչպէս պէտք է սալիւա տալ
8. Սկառատը չի ծխում.
9. «Վահագն» Սկառատ (նկար)
10. Սկառատը միշտ պատրաստ է ոկ-նելու ուրիշներին
11. Պատահարներ
12. Ֆութբոլ
13. Մօրդ

2013



# «ՎԱՀԱԳՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ»

ԼՈՅԾ ՏԵՍԱԿ

1. «Վահագն» Սկառուտի օրացոյց, 60 ռ.
2. Անրաժեշտ գիտելիքներ Մկանուն-ների համար, 100 ռ.

